ՍԵՐՈԲ ԱՆՏԻՆՅԱՆ

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ. ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐ

Հայոց նորագույն պատմության մեջ քիչ են անհատականությունները, որոնք իրենց կյանքով և գործունեությամբ ունեցած լինեն այդպիսի զգալի ներդրում մեր ժողովրդին մատուցած ծառայությունների շարքում և իրենց անձնուրացության և անսահման նվիրումի շնորհիվ իրականացրած լինեն հիրավի պատմական առաքելություն: Այդպիսի բացառիկ մի անհատականություն էր Ալեք Մանուկյանը՝ Սփյուռքի հայ համայնքների մեծ բարերարը:

Դեռ պատանի տարիքում գաղթելով իր ծննդավայրից՝ Իզմիր նահանգից, նա չնչին միջոցներով տեղափոխվում է ԱՄՆ, իր բացառիկ աշխատասիրության, կամքի եւ ունակությունների շնորհիվ ձեռք է բերում մասնագիտություն, տիրապետում ձեռնարկատիրության նրբություններին, դառնում ճանաչված ու հաջողակ գործարար:

Իր ժողովրդին ամեն կերպ զորավիգ լինելու, նրա հոգսերին ու խնդիրներին աջակցելու ձգտմամբ, նա անդամագրվում է հայկական ամենահեղինակավոր բարեսիրական կազմակերպությանը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը, հետագայում դառնալով այդ կառույցի ամենանշանավոր ղեկավարներից մեկը:

«Ալեք Մանուկյանի դերը իր կարևորությամբ ՀԲԸ Միության պատմության մեջ բացառիկ էր,- գրում է Էդ. Մելքոնյանը: - Նա ղեկավարեց այդ կազմակերպությունը շուրջ 36 տարի, և այդ ընթացքում Միությունը ունեցավ այնպիսի արդյունավետ գործունեություն, որ իր նշանակությամբ համեմատելի է հենց Միության հիմնադրման հետ»[1]:

Ալեք Մանուկյանի ղեկավարման տարիներին Բարեգործականը անսահմանեպ վերելք ապրեց. ՀԲԸՄ կապիտալ միջոցները մեծացան ավելի քան 6 անգամ: Կազմակերպությունը հզորացավ, մեծ չափով ընդլայնեց իր բարեսիրական և հայանպաստ գործունեությունը, ձեռք բերեց համահայկական եւ համաշխարհային բովանդակություն:

Կազմակերպական բացառիկ ունակությունների, հայրենասիրության, մարդկային ազնվության և առաքինության շնորհիվ, Ալեք Մանուկյանը կարողացավ դիմակայել 1950-60-ականներին կազմակերպության առջև ծագած մարտահրավերներին, պահպանել Բարեգործականի ներքին միասնությունը, թույլ չտալ պառակտումներ և բաժանումներ:

Նրան հաջողվեց զարգացնել և կայացնել բարեսիրական կազմակերպությունների գործունեության համար թերևս ամենակարևոր սկզբունքի՝ հաշվետվողականության ճիշտ և արդյունավետ կիրառումը, որը մինչ օրս ՀԲԸՄ գործունեության անկյունաքարն է:

Իր ապրած հայրենանվեր կյանքի և բարեսիրական ու մարդասիրական գործունեության համար Ալեք Մանուկյանն արժանացել է բազմաթիվ ու բազմապիսի մրցանակների, պատվավոր կոչումների ու մեծարումների՝ Էլիս Այլընդ մրցանակ՝ Ազգային էթնիկ կազմա-

1 **Է. Մելքոնյան,** Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, էջ 470:

կերպությունների միության կողմից, «Մարդասիրության Ասպետ» մրցանակ՝ Արփասահմանյան Առաքելությունների Հայրապետական Ինստիտուտի (PIME) կողմից, նախագահական մրցանակ եւ այլն, եւ այլն:

Ալեք Մանուկյանին շնորհվել է ՀՀ Ազգային հերոսի կոչում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն[2]: Լեռնային Ղարաբաղի նախագահն Ալեք Մանուկյանին է շնորհել Արցախի «Պատվո շքանշան»:Նա ունի Սաութֆիլդի Լորենսի տեխնոլոգիաների համալսարանի (Միչիգան), Դեթրոյտի Ռեյնի պետական համալսարանի, Միչիգանի համալսարանի և Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի աստիճան: Մեծ բարերարի աճյունը հանգչում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր իսկ նվիրաբերությամբ կառուցված «Ալեք և Մարի Մանուկյանների անվան գանձատուն-թանգարանում»:

***

Ալեք Մանուկյանը ծնվել է 1901 թ. Թուրքիայի Իզմիր (Զմյուռնիա) նահանգի Գասաբա ավանում՝ առևտրականի ընտանիքում: Նա Թագվոր և Թագուհի ավանդապաշտ ծնողների հինգ երեխաներից ավագն էր, մեծ սեր էր վայելում հարազատների շրջանում իր աշխատասիրությամբ, բարեկամասիրությամբ, ուշիմությամբ, զսպվածությամբ: Ալեքի հայրը ցորենի վաճառական էր, միևնույն ժամանակ անսահման նվիրված էր եկեղեցուն, և իր զավակին, բացի վարժարանից, եկեղեցական կրթության է տալիս: Հաջողությամբ ավարտելով երկրորդական վարժարանը՝ նա գործակցել է նոր առևտրական ձեռնարկումներին:

Թուրքիայում տիրող տնտեսական քաոսի, հայերի ֆիզիկական գոյությանը սպառնացող քաղաքական վտանգի պայմաններում երիտասարդ Ալեքը 1920 թվականին՝ թուրքերի կողմից Զմյուռնիայի կործանումից երկու տարի առաջ, որոշում է զաղթել իր ծննդավայրից, բաժանվում է ընտանիքից և շատ փոքր, չնչին դրամագլխով մեկնում է ԱՄՆ: Նա ժամանում է Բրիջպորտ, Կոնեկտիկուտ, ուր ապրուստ է վաստակում գործարանային տարբեր աշխատանքներ կատարելով:

Նյու Ինգլանդի մի քանի քաղաքներում ապրելուց հետո, 1924 թ. Ալեքը վերջնապես հաստատվում է Դետրոյթ քաղաքում: Այնտեղ մի քանի տարի շարունակ աշխատում է մեքենաների պտուտակներ արտադրող գործարաններում, ձեռք բերում մասնագիտություն, հմտություններ, վարպետություն, տիրապետում արտադրության արվեստին և արհեստին: Իզմիրի ահավոր աղետից հետո, 1929 թ. փրկված ծնողներին Հունաստանից տեղափոխում է Դետրոյթ:

Ունենալով արտակարգ ընդունակություն, առևտրի ձիրք՝ տնտեսության, արտադրության կազմակերպման, ղեկավարման և արդեն բավականին կուտակած միջոցներ, 1929 թ. Դետրոյթում ստեղծում է մի փոքրիկ ձեռնարկություն, որի դրամագլուխը սկզբնապես 4500 դոլարից չէր անցնում[3]: Մի քանի տարվա ընթացքում «Մաքսոն» վերաճում է

2 Տե՛ս Վիքիպեդիա, http://en.wikipedia.org/wiki/Alex_Manoogian ինտերնետային կայքը:
3 **Տե՛ս Ա. Անդրէասեան,** Համազգային առաքելութիւն, 1906-1981, Նիւ Եորք, 1981, էջ 43:

միջազգային ընկերության՝ տարեկան մոտ 3 միլիարդ ԱՄՆ դոլարի հասնող վաճառքի ծավալներով: Չնայած ճգնաժամային տարիների դժվարություններին՝ 1936 թ. Ալեք Մանուկյանի ընկերությունը բավականին մեծ էր և աչքի էր ընկնում արժեթղթերի շուկայում: Ի դեպ, դա արժեթղթերի շուկայում ընդգրկված հայի պատկանող առաջին ընկերությունն էր:

«Մաքսո» ընկերությունը ինքնին ուշագրավ երևույթ է ափյուռքի պատմության մեջ: Այն հայի կողմից հիմնված առաջին արդյունաբերական ձեռնարկությունն էր, որը ստացավ նման համաշխարհային ճանաչում[4]: Հենց ընկերության այդչափ մեծ հաջողություններն ու շահույթները հնարավորություն տվեցին նրա հիմանդրին՝ Ալեք Մանուկյանին, իրականացնելու բազմապիսի հայանպաստ ծրագրեր: «Ինձի համար,- ասում էր նա,- որևէ անձնական յաջողութիւն կամ բարօրութիւն թունաւոր բան մը կ'ունենայ իր մէջ, երբ ազգը անկէ իր բաժինը չ'ստանայ»[5]:

1931 թվականին Ալեք Մանուկյանը Նյու Յորքում ամուսնանում է Մարի Դադյանի հետ, որը գեղագիտական արժեքների տեր կին էր: Շուտով նա ամուսնուն պարգևում է երկու զավակ՝ Լուիզ (Սիմոն) և Ռիչարդ: Տիկին Մարի Մանուկյանը հավատարիմ կյանքի ուղեկից էր և մինչև 1993 թ. մահկանացուն կնքելը սատարում էր ամուսնուն միջոցառումներում և ծրագրերում: Այժմ Ալեք Մանուկյանի գերդասպանում կա վեց թոռ և հինգ ծոռ:

1930-ական թվականներին Ալեք Մանուկյանը անդամագրվում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը (ՀԲԸՄ) և «Վարդանանց ասպետներ» կազմակերպությանը: 1940 թվականին նա ընտրվում է «Վարդանանց ասպետների» Ավագ սպարապետ:

Դեռ այն ժամանակ, նրա նվիրատվությունների շնորհիվ Ափյուռքում սկսեցին գործել մի շարք հայկական հաստատություններ՝ հայկական դպրոցներ ու կենտրոններ Սաութֆիլդում (Միչիգան), Բուենոս Այրեսում և Կորդոբայում (Արգենտինա), Լոս Անջելեսում և Փասադենայում (Կալիֆոռնիա), Մոնրեալում և Տորոնտոյում (Կանադա), Թեհրանում (Իրան), Մոնտեվիդեոյում (Ուրուգվայ), Սան Պաուլոյում (Բրազիլիա), Բեյրութում և Զահլեում (Լիբանան), Ալմելոյում (Հոլանդիա), Փարիզում (Ֆրանսիա) և Սիդնեյում (Ավստրալիա), բոլորն էլ՝ ՀԲԸՄ հովանավորության տակ[6]: Ալեք Մանուկյանը Սաութֆիլդի Ս. Հովհաննես հայկական եկեղեցու, Միչիգանի մշակութային կենտրոնի և թանգարանի, Հայաստանում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գանձապան, Ֆլորիդայի Բակո Ռատոնի Ս. Դավիթ դպրոցի, Երուսաղեմի Ալեք և Մարի Մանուկյան ճեմարանի (Իսրայել), Լիվոնիայի Թազվոր և Թագուհի Մանուկյան հանգստյան տան (Միչիգան) հիմնական նվիրատուն էր: Տարիների ընթացքում նա մեծահոգաբար աջակցել է Հայաստանի, Ամերիկայի Արևմտյան և Արևելյան հայոց թեմերին, Իտալիայում՝ Վենետիկի և Վիեննայում՝ Մխիթարյան միաբանության վանքերի տարբեր ծրագրերին:

1953 թվականին Ալեք Մանուկյանը ՀԲԸՄ Կենտրոնական Վարչական ժողովի կողմից ընտրվում է միության նախագահ:

---

4 Տե՛ս **Է. Մելքոնյան,** Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն,էջ 471:

5 «Միութիւն», 1955, մարտ, էջ 23:

6 Տե՛ս «Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան», հ. երկրորդ, (1941-2006), Գահիրէ-Փարիզ-Նիւ Եոօք, 2006, էջ 344:

Շարունակելով 1906 թ. Եգիպտոսում հրապարակ իջած Հայ Բարեգործական Ընդհանուր Միության փոքրաքանակ ղեկավար, պետական-քաղաքական գործիչ և դիվանագետ, մեծ հայրենասեր Պողոս Նուբար փաշայի ավանդույթները, 1954-ից ստանձնելով ՀԲԸՄ նախագահի պարտականությունը՝ Ալեք Մանուկյանը ազգասիրական, հայրենասիրական բազում ձեռնարկումներով ոչ միայն ճանաչելի է դառնում աշխարհին, այլև առաջնակարգ դիրք գրավում, վայելում մեծ համբավ:

1954-ին «Հայաստանի կոչնակ»-ում տպագրված հոդվածում Ալեք Մանուկյանը բնութագրվում է որպես մեծ հայրենասեր, որ իր երկարատև աշխատանքով մեծ ճանապարհ է անցել և դարձել ճանաչված հասարակական դեմք: Իր ջերմ խանդաղատանքը հայ կյանքի, հայ հոգու հանդեպ, իր առողջ հասկացողությունը, իր ձգտումները ցույց են տալիս, թե ինչ զորավոր կապերով է կապված եղել իր ժողովրդի, իր ազգի հետ՝ այն բարիքի մշտահոս աղբյուր գտնելով: «Ուշագրավ կարողության տեր, պաշտոնի պատասխանատվության մեծ զգացում ունենալով, երիտասարդ, կորովի ձեռներեցը գործի աշխարհի մեջ առաջնակարգ դիրք է գրավում՝ գլխավորելով ճարտարապետական գործարար մեկից ավելի հաստատություններ: Այդ դիրքին նա հասել է իր արթուն, պայծառ մտքի, իր անձնական ջանքերի, իր զորավոր կամքի և ազնիվ նկարագրի շնորհիվ: Երբ եկել է ԱՄՆ իրեն գրահ է ունեցել հայի տոկունությունը, աննկուն կամքը, միաժամանակ՝ խորունկ, ջերմ հոգին, և իր հաջողությունից չի շլացել: Իր համեստության շնորհիվ շատ առաջ չի վազել ու ճանաչվել, թեև մեծ գործեր է կատարել ազգապահպանման»[7]: Իր հիմնած հաստատության ծանր ու մեծածավալ աշխատանքների, հսկայածավալ գործունեության հետ մեկտեղ նա հաջողությամբ իրականացրել է ազգասիրական, հայրենասիրական ձեռնարկումներ: Դպրոցը, բարեսիրական, հայրենակցական միությունները, եկեղեցին, ծերանոցը, մշակութային կազմակերպությունները, ազգանպաստ ամեն կարգի ձեռնարկումներ, նույնիսկ ժամերգություններն ու պատերազմները անբաժանելի մաս են կազմել և իմաստավորել են Ալեք Մանուկյանի կյանքի անցած երկարամյա բեղմնավոր ուղին:

Ալեք Մանուկյանը բարեգործականը պատվով ղեկավարել է 36 տարի: Իր նախագահության օրոք ՀԲԸՄ կապիտալ միջոցները 8 միլիոն ԱՄՆ դոլարից աճում են և հասնում 50 միլիոնի՝ 120 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ ընդհանուր ակտիվներով: Ի նշան երախտիքի՝ 1970 թվականին Ալեք Մանուկյանը Ընդհանուր Վեհաժողովի կողմից ընտրվում է ցկյանս նախագահ, իսկ 1989-ին՝ ցկյանս Պատվավոր նախագահ:

1980-ական թվականներին ՀԲԸ Միությունն իր ծավալով և ընդգրկումով արդեն դարձել էր Սփյուռքի ամենազանգվածային, ամենախոշոր կազմակերպությունը:

Մեծ գործարարին հատուկ էր քաղաքական նոր մտածողությունը, հեռատեսությունը: Որպես ԱՄՆ օրինապաշտ քաղաքացի՝ Ալեք Մանուկյանն առատաձեռն նվիրաբերություններ է կատարել նաև Միացյալ Նահանգների հիվանդանոցներին, թանգարաններին, գրադարաններին, համալսարաններին, դպրոցներին և այլ բարեգործական, կրթական կազմակերպությունների: Քաղաքապետի պաշտոնական նստավայրը առավել հարմարավետ դարձնելու նպատակով նա իր առանձնատունը նվիրել է՝ Դետրոյթի քաղաքապետարան դարձնելու համար:

7 «Հայաստանի կոչնակ», 1954, էջ 127-128:

Իր սեփական գործերին զուգահեռ, Ա. Մանուկյանը դասավանդել է հայ դպրոցում, այն մեծ պատիվ համարելով: Եւ երբ իրականանում է նրա ֆինանսական երազանքը, նա իր ողջ կարողությունն ուղղում է դպրոցաշինությանը՝ միշտ առանձնացնելով նաև եկեղեցու դերը որպես ամենակարևոր հաստատություն: Նրա հեռատեսության ու խորիմաստության գրավականն էր կրթական գործին, համալսարաններին և դպրոցներին օգտակար լինելը, կրթության համար ֆինանսներ ներդնելը՝ հետագայում կիրթ, գրագետ, բանիմաց սերունդ ունենալու, լավագույն պտուղներ քաղելու համար: Ահա թե ինչու Ուեյնի պետական համալսարանը Դետրոյտում իր էթնիկ ժառանգության Կենտրոնն անվանեց Ալեք Մանուկյանի Սրահ:

Նա նշանակալի նվիրատվություն է կատարել Միչիգանի համալսարանին՝ աջակցելու համար Ջերալդ Ֆորդ գրադարանին և ստեղծելու հայագիտությանը նվիրված երկու ամբիոններ՝ ժամանակակից Հայոց պատմության Ալեք Մանուկյան ամբիոնը և Հայոց լեզվի և գրականության Մարի Մանուկյան ամբիոնը: Նա էական ներդրումներ է կատարել Կալիֆոռնիայի, Նյու Յորքի Կոլումբիա, Մասաչուսեթսի, Բոստոնի համալսարանների, Լեյդենի համալսարանի (Հոլանդիա), Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի, Ուոլթհեմի Բենթլի քոլեջի (Մասաչուսեթս) հայագիտության ծրագրերում և ամբիոններում:

Ալեք Մանուկյանին հուզում էին հայապահպանության խնդիրները՝ աշխարհասփյուռ հայերին տարբեր համայնքներում համախմբելը, իրենց ինքնությանը, պատմությանը հավատարիմ պահելը:

Բեյրութում, Փարիզում, Մոնրեալում, Բուենոս Այրեսում, Լոս Անջելեսում, Սան Պաուլոյում, Վալանսում, Տորոնտոյում և այլուր իրենց հարուստ գրադարաններով, թանգարաններով, աշխատանոցներով, մարզասրահներով, դահլիճներով՝ կառուցված ՀԲԸ Միության շենքերն ու շինությունները իրենց մեծ նպաստն են բերել հայ մարդկանց հանգստի, կյանքի կազմակերպմանը, հասարակական աշխատանքներին: Բարեգործականը մեծ միջոցներ է տրամադրել նաև հայագիտական ուսումնասիրություններին, հայ գրողների գործերի հրատարակություններին, հայ պարբերականների լույս ընծայմանը, որը շարունակվում է մինչև այսօր:

Մեծ բարերարը հատուկ վերաբերմունք ուներ Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ: Քչերին է հայտնի, որ հաջողակ գործարարը փոքր հասակում սարկավագ է եղել: Հավատն ու սերը առ եկեղեցի նրան մղում էին խոշոր նվիրատվությունների: Ալեք և Մարի Մանուկյան բարերարների բազում ազգանվեր, հայրենանվեր ձեռնարկումներից առանձնանում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի ձեռամբ 1982-ի հոկտեմբերի 6-ին բացված՝ Ալեք-Մարի Մանուկյան Գանձատունը: Այն հրաշալի մի շինություն է, ուր պահվում են Հայ Առաքելական Եկեղեցու եկեղեցական գանձերը: Գանձատան բացմանը մասնակցում էին հայ համայնքներից ժամանած բազմաթիվ հյուրեր, Հայաստանի պետական, հասարակական ու մշակութային գործիչներ: Այդ առումով հետաքրքիր դիտարկում է կատարում ինքը՝ Մեծ բարերարը. «Դարեր շարունակ հայ գաղթականները կառուցած են պալատներ ու եկեղեցիներ, դպրոցներ ու հաստատություններ, սակայն այդ կառույցներէն ու անոնց բուռն գործունէութենէն մնացած վկայութիւնները՝ Սինկաբուրէն մինչև Հնդկաս-

տան և Ինտոնեգիայէն մինչև Լեհաստան, լքուած գերեզմանաքարեր են: Միայն հայոց հողի վրայ կառուցուածներն են, որ կ'ապրին յաւերժ, միայն այդ հողին վրայ է, որ խաչքարի կողքին կենդանի շունչով կը դողանջէ հայուն խաչազարդ զմբեթը»[8]:

Թեև մինչև Էջմիածնի Գանձապտունը, 1965-ին՝ Եղեռնի 50-ամյակին ու հետագա տարիներին Սփյուռքի հայրենակցական միությունների ջանքերով Հայրենիքում կառուցվել էին Մուսա Լեռան, Վասպուրականի, Հաճընի հերոսամարտերի, Խարբերդի, Մալաթիայի, Սեբաստիայի, Այնթափի հուշարձանները, սակայն այդ ամենի թագն ու պսակը հանդիսանում են Էջմիածնի Գանձապտունը, Սարդարապատի հիասքանչ համալիրն ու թանգարանը:

***

Երկրորդ Համաշխարհային պատերազմի պատճառով 1942 թ. Բարեգործականի կենտրոնավայրը Փարիզից տեղափոխվել էր Նյու Յորք: Դեռ այն ժամանակ, Ա. Կարագյոզյանի նախագահության օրոք, այս հանգամանքը ոչ միարժեք էր ընկալվում և մեկնաբանվում Միության շատ անդամների կողմից: Տարիներ հետո, երբ արդեն Ալեք Մանուկյանը սպանձնեց Բարեգործականի նախագահությունը, այդ տարակածությունները և խռովության հասնող վեճերը նորից սկսել էին ասպարեզ ելնել: Նորից ձայն էին բարձրացել Փարիզում նստած միության որոշ պաշտոնամոլ նախկին ղեկավարներ, որոնք տարիներ շարունակ Կարագյոզյանին և միության նոր ղեկավարությանը մեղադրում էին Հ.Բ.Ը. Միության ամերիկացման, Պողոս Նուբարի հիշատակը չհարգելու, կանոնադրության խախտումների, երկրորդական, երրորդական հարցերում և պահանջում՝ միության կենտրոնն անհապաղ վերադարձնել Փարիզ: Պայքարը, որ ծլարձակվել էր 1945-ին, շատ ավելի բուռն էր դարձել 1950-ական թվականներին և հասել այնպիսի ծայրահեղության, որ մենատիրական հակումների մեջ էին զրպարտում նույնիսկ նախագահական գործին նոր անցած Ալեք Մանուկյանին:

Դրությունը ծանր էր նաև նրանով, որ աստիճանաբար ահագնանում էր սառը պատերազմի ազդեցությունը: ԱՄՆ-ում սև ցուցակներում գրանցվում էին բոլոր այն հայրենասիրական կազմակերպությունները, որոնք ինչ-ինչ կապերի մեջ էին ,երկաթե վարագույրի հետևում ապրող ժողովուրդների և պետությունների հետ: Սառը պատերազմի և ստալինյան բռնապետության պայմաններում հարկավոր էին նոր մտածողություն և համարձակ գործելակերպ ունեցող ուժեր՝ միության նոր ուղեգծի և հաջող գործունեության կազմակերպման համար: Այդ նոր մարդկանց շարքում իր պատրաստվածությամբ, փորձով և կարողություններով աչքի էր ընկնում Ալեք Մանուկյանը, որ 1953 թ. ընտրվել էր Հ.Բ.Ը. Միության նախագահ: Նրան էր վստահված բոլոր դժվարությունների և տարաձայնությունների հաղթահարման դեկը:

Ալեք Մանուկյանը իր նոր քաղաքական մտածողությամբ և հեռատեսությամբ Միության աշխատանքը չվտանգելու, ամերիկյան ,սև ցուցակներից զերծ պահելու նպատակով

8 **Վ. Համազասպյան,** Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Երևան, 2001, էջ 271:

հանձնարարական է տալիս իրավագետներից կազմված հատուկ հանձնաժողովին՝ վերափոխել գործող կանոնադրությունը և քաղաքական նոր պայմաններին համապատասխան կազմել նոր կանոնադրություն, որը 1969 թ. Փարիզյան համաշխարհային համագումարում դրվում է հաստատման: Չնայած այդ նորամուծությանը հանդիպած կատաղի դիմադրության, որին մասնակից էին նաև ՀԲԸՄ շատ անվանի և հեղինակավոր անդամներ, հենց Ալեք Մանուկյանի ռեֆորմը թույլ տվեց Բարեգործականին նոր իրավական կարգավիճակով լայն կազմակերպական գործունեություն ծավալել ԱՄՆ-ում, հզորանալ ու մեծանալ:

Ավելի քան մեկ տասնամյակ տևեց պայքարը Հ.Բ.Ը.Մ. միասնության, կենտրոնի տեղափոխման ու իրավասությունների, այսպես կոչված՝ ,ամերիկացմանե, հայրենիքից հեռացման դեմ[9]: Սակայն պայքարելով զրպարտիչների դեմ, Ալեք Մանուկյանը նպատակասլաց գործունեություն է ծավալում, նոր կենտրոնի միջոցով պահպանելով միության ավանդույթները, չշեղվելով Պողոս Նուբար փաշայի հաստատած կանոնադրության սկզբունքներից: Նա շատ ավելի առաջ է անցել և Հ.Բ.Ը. Միությունը դարձրել միջոցներով հարուստ, հայ գաղութների ամենից հեղինակավոր, հայապահպանության վստահելի հենարանը, հայրենիքի կողքին կանգնած մեծ հեղինակություն վայելող հայրենասիրական հզոր կազմակերպություն: 1962 թ. դեկտեմբերի 15-ին Հ.Բ.Ը.Մ. 49-րդ ժողովում իր հաշվետու զեկուցման մեջ վերլուծելով անցած ժամանակաշրջանում պառակտիչ խմբի բոյկոտիչ, իսկ միության վարչության ազգաշեն գործունեությունը՝ Ալեք Մանուկյանը մեկ առ մեկ հիշատակում է այն դրականը, այն ձեռքբերումները, որ հետևանք են եղել ճիշտ կողմնորոշման, խելացի մոտեցման, փոխադարձ հասկացողության, եղբայրական աշխատանքի: «1960-ի Ընդհանուր ժողովին մէջ մասնաւոր կերպով ծանրացած էր այն հսկայաքայլ յառաջադիմութեան վրայ, զոր Բարեգործականը կատարած էր իր Կեդրոնը Նիւ Եօրք փոխադրելէն ի վեր, միանգամայն շեշտելով, թէ որքան վճռական եղած էր ամերիկյան մեր կազմկերպութեանց դերը այն անօրինակ վերելքի մէջ: Իսկ 1961 թ. Ընդհանուր ժողովին լայնօրէն բացատրած էր Միութեան իրաւական անձնաւորութեան, կանոնադրական բարեփոխութեանց ու պատշաճեցումներու վերաբերեալ հարցերը, որոնք կապ ունին մեր գործունէութեան անարգել, ներդաշնակ ու արդիւնաւէտ ընթացքին հետ: Կարևոր կը նկատեմ այս երկու կէտերը կրկին շեշտել:

Նախ կ'առնեմ Միութեան նիւթական կացութեան բարգաւաճման պարագան: Երբ Միութեան Կենտրոնը 1940-ին Նիւ Եօրք փոխադրեցաւ, ըստ Եւրոպայի մէջ պատրաստուած անոր վերջին հաշուեկշռին, 31 դեկտեմբեր 1939 թուակիր, Բարեգործականի հարստութիւնը մօտաւորապէս 3.800.000 դոլար էր, տոմարական հաշուով:

Այս գումարին դէմ՝ այսօր ունենք հետևեալ պատկերը.

Բարեգործականի հարստութիւնը տոմարական հաշուով մօտաւորապէս 11.000.000 է, իսկ իրական արժէքով կը հասնի 14.000.000 դոլարի: Այս թուանշանները նկատի առնելով, կը տեսնենք, թէ Միութեան հարստութիւնը 21 տարուայ մէջ աւելի քան եռապատկուած է:

Հ.Բ.Ը. Միության ճշմարիտ վերածնունդին և անօրինակ կենսունակութեան այս իրականութիւնը պէտք է խանդավառութեամբ լեցնէ անոր բոլոր անկեղծ հաւատարները:

9 «Լուսաբանութիւն մը Հ. Բ. Ը. Միութեան բոլոր անդամներու համար», Փարիզ, 1962, էջ 64:

Դրամագլուխներու տարիներու ընթացքին ունեցած աճումը, ներքին հաշուական հաւելումներէ զատ, գլխաւորաբար արդիւնքն է նոր կտակներու և նուիրատուութեանց, որոնց գումարը 5 միլիոն դոլարէն աւել է:

Գրեթէ ամեն տարի կանոնաւորաբար ստացուած այդ կտակներն ու նուիրատուութիւնները, որոնք մասնաւորապէս կու գան Ամերիկեան շրջանակէն, անհերքելի ապացոյց են Միութեան ներկայ ղեկավարութեան հանդէպ ժողովուրդին ցոյց տուած անվերապահ վստահութեան և խօսուն գնահատանքը՝ այս օրինեալ կազմակերպութեան ամենուրեք սփռած փրկարար բարիքներուն: Իր մնայուն հարստութեանց զուգահեռաբար ուժեղ թափով աճած են նաև Միութեան հասոյթները[10]:

Հայրենասիրական նպատակների համար կուտակված հանգանակված գումարները անօգտագործելի չէին մնում, դրանց ամեն մի սենտը մեծ պատասխանատվությամբ ծախսվում էր Սփյուռքի հայապահպանության, հայ դպրոցի ստեղծման, հայ մշակույթի պրոպագանդման, կարիքավոր գաղութների, կուլտուր-լուսավորական գործերի ապահովման համար:

«Նախորդ շրջանին մեր Միութիւնը ունէր միայն երկու դպրոց, Մելգոնեան հաստատութիւնը և Դարուհի Յակոբեան Նախակրթարանը, այսօր ունի 14 սեփական վարժարաններ, անոնց չորսը երկրորդական կրթութեան՝ հայ սքոլի աստիճանով: Անոնցմէ երկուքը միայն՝ Մելգոնեանն ու Դարուհի Յակոբեանը հիմա հայ սքոլի աստիճանով, կը հոգացուին իրենց յատուկ հիմնադրամներով, բոլոր միւսներուն ծախքերուն Կեդրոնական վարչութիւնն է, որ կը հոգայ»,-նշում է իր հաշվետվության մեջ Ա. Մանուկյանը: Կատարված աշխատանքի և նվիրատվությունների շնորհիվ պահպանվող և գործող վարժարաններից 11-ը իրենց սեփական շենքերն ունեն: ,Նախորդ շրջանին գոյութիւն չունէին նաև համալսարանական կրթաթոշակներ[11]:

Ընդհանուր ժողովում ներկայացրած իր զեկուցման մեջ Ալեք Մանուկյանը սպառիչ հիմնավորումներ է տալիս իր ղեկավարման ընթացքում կայացրած որոշումների կապակցությամբ, նշելով, որ դրանք բազմակողմանիորեն քննարկվել, վերլուծվել, ապա ծանոթացվել են միության բոլոր շարքային և ղեկավար աշխատողներին: Կշռադատված որոշումներ են ընդունվել մեծամասնության համաձայնությամբ: Այդ ամենն արվել է Միության հետագա բարգավաճման և միջոցների կուտակման ճիշտ հաշվարկների, ամերիկյան օրենքների օգտագործման և նրան կուլ չգնալու նկատառումներով: Նույնանման մոտեցում է հանդես բերվել միության նյութական միջոցների, կալվածքների, շվեյցարական ընկերության իրավիճակի պարզեցման, գլխավորապես արտասահմանում նրա կալվածքների հանդեպ: Այս և նման փոփոխությունների, բարելավումների, ճշտումների, օրենքով սահմանված իրավունքների հստակեցման նպատակով ավելի քան երեք տարի ամերիկյան և շվեյցարական փորձված իրավագետներ, մասնագետներ հանգամանորեն ուսումնասիրեցին օրենքները, միության հնարավորությունները, շահերը, որպեսզի օրինական բոլոր պայմաններն ապահովեն, և հետագայում որևէ բարդություն կամ թյուրիմացություն տեղի չունենա: Որպեսզի

10 «Հ. Բ. Ը. Միութեան խօսքը պառակտիչ շարժումի մասին, Հրատարակութիւն Կեդրոնական վարչական ժողովի», Նիւ Եօրք, 1963, էջ 70:

11 Անդ, էջ 71:

նոր իրավիճակով շատ ավելի շահի բարեգործականը, դառնա բարգավաճ, տնտեսապես ու բարոյապես մեծ կշիռ ունեցող կազմակերպություն:

Ալեք Մանուկյանը մեծ քաղաքագետի և բարեսիրական գործի նվիրյալի համբերատարությամբ, միության ղեկավարության աջակցությամբ, հավատարիմ Նուբար փաշայի սկզբունքներին՝ որևէ շեղում թույլ չտվեց կանոնադրության պահանջներից և, ի հեճուկս «ընդդիմադիր խմբի» ոտնձգություններին, իր բեղմնավոր աշխատանքով վերջնականորեն հարթեց ճանապարհը միության նոր ձեռքբերումների:

,Ես հիշում եմ, թե ինչպես 1965-ին, իմ Փարիզ գտնվելու օրերին, մի խումբ բողոքավորներ պարոն Ն. Ֆրանկյանի[12] գլխավորությամբ այցելեցին ինձ որոշ նյութերով, արձանագրություններով, որոշումներով և աշխատում էին ապացուցել, որ ,Ալեք Մանուկյանը ցանկանում է Հ.Բ.Ը Միությունը կտրել, հեռացնել հայրենիքից,- իր մենագրության մեջ գրում է պատմաբան, պետական, կուսակցական գործիչ, 1964-1990 թթ. ՀԽՍՀ կառավարությանն առընթեր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը[13]: «Զրպարտանքը հասնում էր նրան, որ իբր, «Ալեք Մանուկյանը միության կապիտալները, մեծ դրամագլուխը օգտագործում է իր շահերին, իր միջոցների հզորացման, ապա ինչպես կարելի է բացատրել այն չնչին աճը, որ ունի միության դրամագլուխը»: Բողոքավորների խումբը զարմացավ, որ հայրենիքը և սփյուռքի կոմիտեն մոտիկից ծանոթ էր վիճակին, այն մեծ գործունեությանն ու դրամագլխի օգտագործմանը, գործի եղելությանը և ամենից կարևորը և զարմանալին, որ հայրենիքը պաշտպանում էր միության ղեկավարության և Ա. Մանուկյանի բռնած դիրքն ու կեցվածքը այդ հարցում: Խումբը դժգոհ մնալով հայրենիքի վերաբերմունքից, հատուկ հոդվածով հանդես եկավ Փարիզի ,Աշխարհ թերթում, հայրենիքի դիրքորոշումը ոչ հայրենասիրական համարելով նրա համար, որ «վերջին տասնամյակը Հ.Բ.Ը Միության վերելքի և բարգավաճման տարիներ է համարելե[14]:

Հ.Բ.Ը. Միության ձեռնարկումներին, միջոցների հանգանակության, Հայաստանի հետ կապերի վերականգնման, ներգաղթի կազմակերպման, հայ դատի արդար լուծման բոլոր աշխատանքներին մշտապես իրենց մասնակցությունն ու ջերմ հայրենասիրական վերաբերմունքն են բերել Միության վարչության բոլոր անդամները, և հատկապես ԱՄՆ մասնաճյուղը, որի նվիրյալ գործիչներից մեկն էր Ալեք Մանուկյանը:

Թևավոր է դարձել Ալեք Մանուկյանի խոսքը. «Ինձի համար միշտ երազանք եղած է իմ աղյուսս ավելցնել հայրենիքի կառուցումի գործին»:

Սակայն, իր ողջ երկարամյա կյանքի ընթացքում բարեգործական, կրոնական, մշակութային և այլ նպատակներով միլիոնավոր դոլարներ նվիրաբերելով և միշտ աչքի առաջ ունենալով հայ մշակույթի, հայապահպանության, հայագիտության, նախակրթարանների ու կրթարանների, հայ եկեղեցիների, ծերանոցների, հիվանդանոցների, հուշարձանների կառուցման ու վերականգնման գործը, նա ոչ թե «աղյուս», այլ անկյունաքարեր, վիմաքա-

12 Ֆրանսիայի Հ.Բ.Ը Միության շրջանային վարչության ժամանակի ատենապետ, Ֆրանկյանը մինչև 1962 թ. համառորեն սպորագրում էր նաև «Հ.Բ.Ը Միության առժամյա կենտրոնական վարչության ատենապետ»:

13 **Վ. Համազասպյան,** Ալեք Մանուկյան, Երևան, 2010, էջ 17:

14 Անդ, էջ 18:

րեր դրեց բարեգործություն կոչվող շենքին և, հենց կյանքի օրոք բարձրացնելով անձեռակերտ հուշարձանն իր, ճանաչվեց որպես իր ժամանակի ազգի մեծ Բարերար:

Իր երկարամյա ազգանվեր գործունեության ընթացքում Ալեք Մանուկյանը մշտապես ձգտել է մոտիկից շփվել ու կապերի մեջ լինել Հայրենիքի, հայ համայնքների կրոնական հաստատությունների, քաղաքական-հասարակական կազմակերպությունների, բարեսիրական միությունների, հոգևոր առաջնորդների, պետական գործիչների հետ և տեսել ու գնահատել է հայապահպանման առողջ կորիզը: Այսօր ևս այժմեական է նրա խոսքը. ,Սփյուռքի հայությունը կապրի Հայաստանի սիրով ու կապրի անոր ապագայի համար, այլապես ինչ իմաստ պիտի ունենար մեր ազգապահպանումի ամբողջ պայքարը, եթե մենք չունենայինք վախճանական նպատակ մը: Մենք համոզված ենք, թե առանց Հայրենիք չի կարող գոյատևել Սփյուռքը[15]:

Խորհրդային տարիներին, չնայած բազում դժվարություններին, Ալեք Մանուկյանը այցելեց Հայրենիք, եղավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Եւ որքան բազմախորհուրդ էր, որ Հայրենիքի մեծ սիրով ապրած երջանկահիշատակ բարերարներ Ալեք և Մարի Մանուկյանների աճյունները, որդու և դստեր համաձայնությամբ, ԱՄՆ-ի Դետրոյթ քաղաքից փոխադրվեցին և 2007 թ. հուլիսի 17-ին ժամը 10-ին բացառիկ պատվով՝ պետական բարձր պատիվներով և եկեղեցական ծիսակարգով ամփոփվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իրենց բարերարությամբ կառուցված Գանձատան առջև:

Կատարվեց հոգեհանգստյան պաշտոն բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ Նախագահի, ԼՂՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, Ալեք և Մարի Մանուկյանների զավակներ Լուիզ-Սիմոն Մանուկյանի, Ռիչարդ Մանուկյանի և Մանուկյան ընտանիքի այլ անդամների մասնակցությամբ: Ամենայն Հայց Կաթողիկոսն իր խոսքում ասաց. ,...Սերնդե-սերունդ մեր զավակները պիտի այցելեն այստեղ՝ նրանց նվիրատվությամբ կառուցված Գանձատուն և գան՝ խոնարհվելու նրանց շիրիմներին: Պիտի աղոթեն նրանց միջոցներով նորոգված և կառուցված եկեղեցիներում, ուսանեն նրանց հովանավորությամբ գործող կրթական հաստատություններում, պիտի ներշնչվեն նրանց բարի գործերով, ազգասեր, հայրենասեր ու եկեղեցասեր ոգով ու օրինակով նրանց, ովքեր «Մահկանացու ծնված՝ անմահ հիշատակ թողեցին»[16]:

Ազնվական անհատականություն Ալեք Մանուկյանի կյանքն ու գործունեությունը սխրանք էր, սիրո ու նվիրումի եզակի մարմնացում առ իր ընտանիքը, իր ժողովուրդն ու Հայրենիքը: Ահա թե ինչու իր երկրային կյանքի ավարտից հետո էլ իր գործը պատվով շարունակվում է արժանավոր ու սիրասուն իր զավակների՝ Լուիզ-Սիմոն և Ռիչարդ Մանուկյանների շնորհիվ: Նրանք իրենց բարեսիրությամբ ու մարդասիրությամբ առավել ևս բարձրացնում են Մանուկյանների տոհմի անունն ու գործը:

Լուիզ-Սիմոն Մանուկյանը՝ արժանավոր հոր արժանի հետևորդը, իրեն նվիրեց ՀԲԸ Միությանը: Նրա բարեգործական գլխավոր օրակարգը դարձավ անկախացած Հայաս-

15 «Հայրենիքի ձայն», 1983, թ. 7, էջ 17:
16 **Վ. Համազասպյան,** Ալեք Մանուկյան, էջ 6:

տանի Հանրապետությունը, որի կառուցման բոլոր փուլերում և բոլոր բնագավառներում օժանդակող եղավ, և շարունակում է օժանդակել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը: Բարերար որդին՝ Ռիչարդ Մանուկյանը, դարձավ մեծանուն գործարարի բիզնես շարունակողը, հոր գործնական, աշխատանքային ավանդույթների շարունակողը: Նա տնտեսական այս բարդ պայմաններում առավել հզորացրեց մանուկյանական բիզնեսը՝ մնալով լռելյայն շռայլ նվիրատու հայ ազգին ու Հայրենիքին:

Ալեք Մանուկյանի՝ հեռատես ու իմաստուն գործչի շատ մտքեր այսօր ևս արդիական են ու ժամանակակից հնչեղություն ունեն. ,Շատ կարևոր է սփիւռքահայ երիտասարդութեան այցելութիւնը հայրենիք: Ականատես եղած ենք դէպքերու, երբ հայ միջավայրէ հեռացած երիտասարդը հայրենիք այցելութենէն ետքը հրաշալի հոգեփոխութիւն մը կրած է, հայացած, խանդավառուած իր հայութեամբ և ընդգրկուած հայկական հասարակական կեանքի մէջ,- գրել է նա[17]:

Ալեք Մանուկյանի կյանքը նվիրում ու սիրանք էր, որ տանում է դեպի հավերժություն, որտեղ «Կյանքը սեր է...» և ապրելու բանաձև:

17 Անդ, էջ 6: